

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 26/2

12 մայիսի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Գուրգեն Ստեփանյանի 10.04.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ 20.02.2014 թ-ի թիվ 002789 որոշման դեմ, ինչպես նաև 15.04.2014 թ-ի միջնորդությունը ՀՀ ԿԱ ՊԵԿ 20.02.2014 թ-ի թիվ 002789 որոշումն անվավեր ճանաչելու մասին գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնելու վերաբերյալ:

Ա/Ձ Գուրգեն Ստեփանյանի գանգատում բերված փաստարկները.

Վարչական մարմինը խախտել է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ պարբերության, Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 35-րդ հոդվածի 2-րդ կետի, 37-րդ հոդվածի, 38-րդ հոդվածի պահանջները:

Այսպես, Վարչական մարմինը Վարչական ակտ ընդունելուց առաջ պարտավոր էր իրականացնել վարչական վարույթ և այդ մասին ծանուցեր վարույթի մասնակիցներին, հնարավորություն տալ վարույթի մասնակիցներին ներկայացնելու իրենց դիրքորոշումները, ապահովել բոլոր փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը բացահայտելու համար գործի բոլոր, այդ թվում նաև վարույթի մասնակիցների օգտին առկա փաստական հանգամանքները, ինչը չի արվել:

Մատնանշված և օրենքով սահմանված իր պարտականությունների պատշաճ կատարման արդյունքում ի հայտ կգային մի շարք հանգամանքներ, որոնց առկայության պայմաններում չէր կարող կազմվել նման Վարչական ակտ:

Մասնավորապես, Վարչական մարմինը խախտել է Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ պարբերության պահանջները: Վարչական մարմինը վարչական ակտը (կասեցման որոշում) կայացրել է, որևէ կերպ ուշադրություն չդարձնելով Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետին, որը սահմանում է, որ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության կասեցման մասին որոշումն ընդունում է լիազորված մարմնի ղեկավարը կասեցման հիմք հանդիսացող խախտումն արձանագրելու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Մինչդեռ, վարչական մարմինը խախտել է սահմանված ժամկետները և որոշում է կայացրել սահմանված ժամկետի խախտմամբ: Այսպես, Բողոքաբերի կողմից վարչական ակտի մեջ հիշատակված ենթադրյալ խախտումը ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեքունու SՀS աշխատակիցների կողմից արձանագրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ 13.01.2014 թ-ի թիվ 2221262 արձանագրությամբ, իսկ թիվ 002789 որոշումը կայացվել է 20.02.2014 թ-ին: Ինչպես տեսնում ենք, 13.01.2014 թ-ից մինչև 20.02.2014թ. ընկած ժամանակահատվածը գերազանցում է Օրենսդրությամբ սահմանված 30 օրյա ժամկետը 7 օրով, որպիսի պայմաններում վարչական մարմինը այլևս որևէ լիազորություն չուներ կայացնելու մեր կողմից բողոքարկվող վարչական ակտը:

Հարկ է նաև նշել, որ վարույթի ընթացքում վարչական մարմինը պարտավոր էր ստուգել սույն որոշումը կայացնելու համար հիմք ծառայած փաստական և իրավական հիմքերը ևս, ինչը նույնպես նրա կողմից չի արվել:

Այսպես, ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի 1.4 կետը սահմանում է, որ հսկիչ գնումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի կամ տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որի մեջ, ի թիվս այլ տեղեկությունների, պետք է նշվեն հսկիչ գնում իրականացնելու հիմքերը:

Իսկ նույն հավելվածի 1.3-րդ կետը սահմանում է այն հիմքերը որոնցից առնվազն մեկի պարտադիր առկայության պայմաններում է միայն հնարավոր իրականացնել հսկիչ գնում: Մինչդեռ, վարչական մարմնի կողմից ներկայացված 20.12.2013 թ-ի թիվ 2221262 հանձնարարագրում խոսք անգամ չկա հսկիչ գնումն իրականացնելու հիմքերի մասին:

ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ստուգումների արդյունքներով խախտումներ հայտնաբերելու դեպքում

կազմվող Ակտում, ի թիվս այլ տվյալների, պետք է նշվեն ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել: Իսկ այս պարագայում, Վարչական մարմնի կողմից կազմված ակտում որն է խոսք չկա կատարված խախտման, կատարման ժամկետի մասին, այլ միայն բավարարվել է իրավական հիմքեր նշելով:

Վարչական մարմինը չի ապահովել բոլոր փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը բացահայտելու համար գործի բոլոր, այդ թվում նաև վարույթի մասնակիցների օգտին առկա փաստական հանգամանքները: Մասնավորապես, գործի բոլոր փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման դեպքում Վարչական մարմնի համար ակնհայտ կդառնար, որ որևէ վերաբերելի և արժանահավատ ապացույց չկա Բողոքաբերին պատասխանատվության ենթարկելու համար:

Իր այս գործողություններով ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ-ն խախտել է ինչպես ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի դրույթները, այնպես էլ նույն օրենքի 2-րդ հավելվածի 1.5-րդ կետի պահանջները: Այդ հոդվածների խախտման արդյունքում խախտվել են նաև Բողոքաբերի կողմից ստուգման (նաև ուսումնասիրության) ընթացքում վերը հիշատակված օրենքի 9-րդ հոդվածի պահանջները:

Ըստ գանգատի, որ վերը հիշատակված փաստական հանգամանքները բավարար են հիմնավորելու, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 20.02.2014 թ-ին կազմված թիվ 002789 որոշումը կազմվել է օրենքի խախտմամբ և ենթակա է անվավեր ճանաչման:

Մինևույն ժամանակ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 20.02.2014 թ-ի թիվ 002789 որոշումն ընդունելու հիմք է հանդիսացել ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ հսկիչ-գնման արդյունքում հայտնարերված խախտումը, որն վիճարկման հայցով ամբողջությամբ վիճարկվում է ՀՀ վարչական դատարանում, հետևապես անհնարին է շարունակել ՀՀ ԿԱ ՊԵԿ 20.02.2014 թ-ի թիվ 002789 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին բերված գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը, և ղեկավարվելով Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով, բողոքաբերը խնդրում է կասեցնել ՀՀ ԿԱ ՊԵԿ 20.02.2014 թ-ի թիվ 002789 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին բերված բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը՝ մինչև թիվ ՎԴ-1772/05/14 վարչական գործով դատական ակտ կայացնելը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Սույն գործի վերաբերյալ հարկ է նշել, որ Հանձնաժողովում քննության է առնվել Ա/Ձ Գուրգեն Ստեփանյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ 10.02.2014 թ-ի թիվ 1108680 ստուգման ակտի դեմ: Մասնավորապես, Հանձնաժողովի 28.02.2014 թ-ի նիստի քննարկման արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Ի կատարումն ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, որոշման նախագիծը և առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն: Արդյունքում ընդունվել է 03.04.2014 թ-ի թիվ 17/2 որոշումը, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ 20.02.2014 թ-ի թիվ 002789 որոշումը կայացվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված երեսուն օրվա ժամկետի խախտմամբ, նշվեց հետևյալը:

«Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության կասեցման մասին որոշումն ընդունում է փազորված մարմնի ղեկավարը՝

կասեցման հիմք հանդիսացող խախտումն արձանագրելու օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում»:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն, ստուգման ակտում նշվում են ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել:

Ելնելով վերագրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ կասեցման հիմք հանդիսացող խախտումն արձանագրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ 10.02.2014 թ-ի թիվ 1108680 ստուգման ակտով: Հետևապես, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 20.02.2014 թ-ի թիվ 002789 որոշումն ընդունվել է «Հսկիչ-դրամարկային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված երեսուն օրվա ժամկետի պահպանմամբ:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի 15.04.2014 թ-ի միջնորդությանը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի հիմքով ՀՀ ԿԱ ՊԵԿ 20.02.2014 թ-ի թիվ 002789 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին բերված բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի կասեցմանը, ապա նշվեց, որ այն հիմնավոր չէ և ենթակա է մերժման: Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝

ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը.»:

Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև վարչական դատավարության կարգով քննվող գործով որոշում կայացնելը անհնարին չէ, քանի որ խնդրո առարկա հարցի վերաբերյալ իր կարծիքը Հանձնաժողովն արդեն իսկ արտահայտել է 03.04.2014 թ-ի թիվ 17/2 որոշմամբ:

Բացի այդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, վարչական բողոք բերելն է կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը: Հետևապես, ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ 10.02.2014 թ-ի թիվ 1108680 ստուգման ակտի դեմ ՀՀ վարչական դատարան հայց ներկայացնելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ 10.04.2014 թ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնելու համար:

Սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և դրան առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ներկայացվել են քննարկման Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ա/Ձ Գուրգեն Ստեփանյանի 10.04.2014 թ-ի գանգատը և 15.04.2014 թ-ի միջնորդությունը մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ